Զարկեց այն նշանաւոր ժամը, երբ բարձր 'ի գըլուխ պիտի հանդիսանար այդ ազգի հոգեկան և մտաւորական այժերի միութիւնը. հարկաւոր էր միայն մի մտաւորական կենտրոն, մի ամուր նեցուկ, մի հեղինակ, ազգասիրական պարայայտիչ, որին ամենայն լուսաւորեալ մարդ կարող լինէր անուանել իր դաստիարակիչը, իր վարդապետը և իր նախանայրը։—Պուչկինը միայն արժանի է այդ փառաւոր կոչմանը։

Ահա հանդիսի նկարագիրը։

Լուսացաւ յունիսի 6-ը—պանծալի և խորհրդաւոր օրը, որին ամենքը սպասում էին անհամբեր սրտով։ Մաքլոտ եղանակը միայն համապատասխան չէր տանջամբոխութեան մեծութեանը և քաղաքացիների ընդհանուր ոգեորութիւնը։ Խաւարած ամպերը թանձր և անընդհատ ջրով ծածկել էին երկինքը, սաստկաշունչ հովը զուր ուշասում էր ցան ու ցիր անել նրանց։ Աւաւտեան ութը ժամին մաղեց մի փոքրիկ անձրև և դադարեցաւ։ Արևդահն ևս մի քանի րոպէի համար փաղաչեղ զուրս եկաւ ամպերի միջից և տարածեց մի հրաշալի ներդաշնակութիւն հանդիսի և բոլոր ընտրեալների միջև։ չփեց նա մի քանի անգամ իր ջերմ ճառագայթներով վարագուրով ծածկած պօէտի արձանի գլուխը և ապա կրկին անհետացաւ ամպերի մէջ։ Աւաւտեան ուղիղ տասն ժամին թնդաց արձանի առաջ գտնված վանքի զանգակի ձայնը և հրավիրեց ժողովուրդը ջերմեռանդ մաղթանքներ մատուցանել պօէտի անմոռանալի յիշատակի համար։

Պատարագիչ էր միտրոպոլիտ Մակարիոսը։ Վանքի մէջ ժողովված էին բարձր ասիճանաւորներ, գրեթէ բոլոր Ռուսաստանի և մասնաւորապէս Եւրոպայի զանազան գիտութեանց ներկայացուցիչներ։ Միտրոպոլիտ Մակարիոսը, պատարագից յետոյ, մի գեղեցիկ և սրտառուչ ճառ խօսեց, որի մէջ նկարագրեց Պուշկինի արգասաւոր գործունէութիւնը առաջ գրականութեան մէջ։ Ապա ժողովուրդը խուռն բազմութեամբ զուրս եկաւ վանքից և գնացաց դիմաց դէպի հրապարակը որ այն բոլորէն ներկայացնում էր մի հրաշալի տեսարան։ Արձանի առաջ շողշողում էին զանազան հաստատութեանց զոյնզոյն ասկեզիր դրօշակներ. հրապարակը և նրա շուրջը լցված էր բազմութեամբ. մեծ և քիչ ազգային երգի նուագը «Коль славенъ Господь на Сіонѣ» ասելի ևս կենդանացնում էր պատկերը և առանձին վեհութիւն էր տալիս ընդհանուր տեսարանին։ Հասաւ այն բոպէն, երբ պիտի վայր ձգէին վարագույրը արձանի վրայից. բոլոր հրապարակի մէջ տիրեց խորին լռութիւն, ամենքը գրեթէ չունէր ընդհատած ըսպասում էին և ահա կուսէր տատանվեցաւ և ընկաւ պատանդանի վրա։ Կարծես կենդանի հանդիսացաւ ամենքի աչքին սիրելի պօէտի պատկերը այդ բարձրանալագեղ տեղում։ Անցաւ բոպէական թըմբութիւնը, ժողովուրդը ասես թէ զարթեցաւ քնից և թնդաց հրապարակը բարձրաձայն «ուրա» աղաղակից։ Երբ կօրնելոսը կարդաց այն ակը, որով արձանը նուիրվում էր քաղաքին ի սեպհականութիւն, պատգամաւորները դիմեցին դէպի արձանը և հինգական ծաղկապակներով զարդարեցին նրա պատանդանը։ Նոյն իսկ օրը տօնախմբութեան հանդէսը կատարվեցաւ։ Համալսարանում, Ընկօրը և երկու պրոֆեսսորները երկայն ճառախօսութեամբ ցոյց տուին Պուշկինի գործունէութիւնը և նրա նշանակութիւնը ռուսաց գրականութեան մէջ։

Աւելորդ չենք համարում և մենք մի քանի խօսք խօսել Պուշկինի գործունէութեան մասին։ Դեռ երիտասարդական հասակի մէջ, լիցէէնի նատարանի վրա, Պուշկինը սկսում է գրել ոտանաւորներ։ Կլասսիկական ուղղութիւնը, որ այն ժամանակ թագաւորում էր բոլոր հեղինակների գրուածների մէջ, չուներ մասաղ պօէտի վրա ամենայն զգալի ազդեցութիւն։ Նրա լայնաձայաց հանճարը կարող չէր բաւականանալ նեղ ու անձուկ շրջանով կլասսիցիզմի. մուսան թելադրում էր նրան նոր մտքեր, նոր գաղափարներ և մի այլ առաղջ ու հիմնաւոր հայացք իրական կեանքի բոլոր երևոյթների վրա։ Այս պատճառով Պուշկինի առաջին գեղոտանաւորների մէջ մենք տեսնում ենք մի ուռանձին հոսանք նոր ուղղութեամբ, որը, ասես թէ բոլորովին պատուասվում է նրա անձին և մասնաւանդ զարգանում է նրա վերջին գրուածների մէջ։

Բայրոնի ազդեցութիւնը կարելի է անուանել մի ամփոփ և արգասաւոր շրջան Պուշկինի գործունէութեան։ Այս իսկ ազդեցութեան ներքոյ նա ստեղծեց իր երևելի «Եվգենի Օնէգին» աշխատութիւնը։ Մինչդեռ Բայրոնը հարկադրում էր «Իսլամ Ժուանին» ճանապարհորդել զանազան երկիրներ, Պուշկինը ընարում է իր հերոսի արկածների համար բուն իսկ ռուս հասարակութիւնը. նա մտցնում է նրան այս և այն ազգային կեանքի շրջանի մէջ և այսպէս զուրս է հանում լոկ միայն կենտրի ազգային պատկերներ։ Այսպէս նա դառնում է ազգային պօէտ. նա աշխատում է դաստիարակել ռուս հասարակութիւնը նոր գաղափարների հիման վրա։ Նա ցոյց է տալիս մի նոր ուղղութիւն, մի նոր ճանապարհ իր հայրենի լեզուն զարգացնելու համար։ Նորա ոտանաւորների ամենայն մի տողը հնչում է մի գրաւիչ ներդաշնակութեամբ և արհեստականութեամբ. մարդ զգում է առանձին խտտիկական զուարճութիւն, կարդալով այդ հրաշալի տողերը։ Պուշկինի ժամանակակիցների հայեցաքը չատ սահմանափակ և միակողմանի էր։ Նրանք նայում էին միայն արտաքինի վրա և այդ տեսակէտից գնահատում էին Պուշկինի հեղինակութիւնները։ Նրանք չէին կարող ըմբռնել այն ճիշդ պատկերները, այն վեհ ու ազնիվ մտքերը, որ ամենայն մի քայլափոխում հնչում էին նրա քաղցրանուագ բնաբերի վրա։ Պուշկինի ամենակարևոր և անմոռանալի վաստակը այն է, որ նա կարողացաւ բարձրացնել գրականութեան նշանակութիւնը և մի յարգելի տեղ տալ նրան։ Նրա ժամանակից միայն ռուսաց գրականութիւնը սկսում է ծանոթանալ և մտանալ իրական կեանքի խնդիրներին. հասարակութիւնը փոքր առ փոքր մտնում է միաւելի բնական մտաւորական աշխարհ և զգում է գրականութեան անհրաժեշտ կարևորութիւնը։ Պուշկինի ազդեցութեան ներքոյ հասարակութիւնը հասնում է այն ստոիճանի հասկացողութեան, որ իր ներկայ վիճակի մէջ սկսում է ճանաչել իր մէջ արմատացած լուսաւորութեան թշնամի էլեմենտները. նա մաքառում է իսարբարոսութեան, տգիտութեան, լաւարի և չարութեան հետ և յաղթող հանդիսանալով, ստեղծում է իր համար մի նոր կեանք, մի նոր ճանապարհ դէպի լուսաւորութիւնը։

Ահա թէ որպիսի բազմարդիւն արգասիք ունեցաւ անմահ պօէտի կարճամեայ գործունէութիւնը։ Անդամանքի կրքուտ զգաց ռուսաց գրականութիւնը նրա անբնական մահուամբը. մանաւանդ որ վերջին տարիներում նրա սրամիտ բանաստեղծական ոգին ստացել էր արդէն իր արվականութիւնը և արծուանման բացած էր լայնատարած թեւերը պատրաստ էր թանգագին գանձեր հաղորդել ռուսաց գրականութեան։

Տէրենց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 25 յունիս

Ուրախութեամբ սրտի լսում ենք, որ Տէր-Գրիգոր Մանդակունու յոգնորմամբ և առաջարկութեամբ կազմվել է մի վարչութիւն ազգասէր և եռանդոտ անձերից, որոնց նպատակն է Հալաբարի մէջ հաստատել մի կանոնաւոր դպրոց Ներսիսեան դպրոցի պատրաստականների և ազգային դաստան պրոգրամին համաձայն, որպէս զի այնտեղ ուսանող աշակերտները ուղղվի Ներսիսեան դպրոցի երկրորդ դպատանը փոխադրվին. դպրոցի անունը ևս անուանել «Մասն Ներսիսեան Ազգային հոգեոր դպրոցին Տֆիխսայ»։ Մենք հալաբարցիքս անհամբեր ուրախութեամբ սպասում ենք այդ ազգօգուտ ձեռնարկութեան յաջող կատարմանը, և մեր խորին շնորհակալութիւնը՝ երախտագէտ սրտով յայտնում ենք արժանապատիւ տէր Մանդակունուն և նրա ազգասէր մեծ. պարոնները, և խնդրում ենք ժամ առաջ բանալ այդ ցանկալի դպրոցը և իրանց խորհած լաւագոյն մեթոդով յաջոնցնել հայ մանուկների դաստիարակութիւնը։ Այս առթիվ գովութեան արժանի կը նըկատվի պ. Աղասի Մելիք-Ադվակոնցի աշակերտութիւնը, որ բարեհաճել է Հալաբարի հրապարակում գտնված իր տունը կէս վարձով տալ դպրոցին և նրա տարեկան 600 ռուբլու վարձուց կէս վարձը 300 ռուբլին միայն ընդունել և հարկ եղած վերանորոգութիւնները իր ծախքով հոգալ, մանաւանդ որ յիշեալ ազնիվ պարոնը խոստացել է ուրիշ միջոցներով ևս նպաստել։ Երանի կը լինէր, եթէ ամեն օգնել կարողացող հայն պ. Աղասիի օրինակին հետևէր։ Նոյնպէս լսում ենք որ այդ վարչութիւնը նոր բացվելիք դպրոցի հետ մի ընթերցարան ևս պիտի բանայ ազգային և ամեն տեսակ լրագրների համար. արդարև այդ ևս ցանկալի կը լինի Հալաբարի ժողովրդականաց, տեսնել այն օրը՝ որ խմված լինի հայ հասարակութիւնը նոր արիասպաղ մէջ լուսաւոր դարուս պահանջների համաձայն։

Ցաւ երկինք, որ առանց եռամսյ չարակամների և առանց ազգավնաս խանդոտների կատարվեր այդ ազգօգուտ ձեռնարկութիւնը. յուրախութիւն բոլոր հալաբարցիների, մանաւանդ նրանց, որոնց երեխաները, անչնորհ և ոգեա տիրացուների անեւրում կենսամաշ ապրում են իրրև աշակերտ, կատարելով նրանց տան անեն ծառայութիւնները, ատամիկիների հրամանների համաձայն, սամովարը ձգել, աղտոտ ջրեր թափել, ուելել, փողոց գնալ ու գալ, երեխաները զբոսեցնել, գրկել, բաղնիք տանել և այն և այն։

Հալաբարցի

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԼԵՔՍԱՆԴԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

—

„Голосъ“ լրագրի մէջ տպված է հետևեալ թղթակցութիւնը Բագուզից։

Պրանիայի մէջ պատահած վերջին անցքերը ալբանցի ազգաբնակներից առաջորդին ալբանական ապստամբութեան առաջնորդներից մէկին։ Այդ համակրելի անձնաւորությունը Իսուֆ-բէյն է։ Ի նեղութի ունենալով, որ այդ մարդը որոշ հայեացքների և համոզմունքների տէր է, որ նա իր ժողովրդի մէջ մեծ հեղինակութիւն ունի և հետևապէս ալբանացիներն էլ բաժանում են նրա համոզմունքները, աւելորդ չեմ համարում ծանոթացնել ձեզ նրա անձնաւորութեան և ծրագրումների հետ։

Պրանիան ժողովրդը զարթեց խոր քնից և գինարբելով իր երկնասարդ, կոյս այժերը, պահանջում է յաղթելել իր ծարաբ անկախութիւնով։ Պրանացիների արթնացումը պատճառը ոչ թէ թիւրքերն են, ինչպէս շատերը կարծում են, այլ Սան-Ստեֆանոյի դաշնագիրը, որի բովանդակութիւնը նրանք աւելի շատ հասկացան, քան թէ կարելի էր ենթադրել։ Այսպէս թէ այնպէս Իսուֆ-բէյ ժողովրդին արթնացողներից մէն է և հենց այդ պատճառով նա մի հետաքրքիր անձնաւորութիւն է։ Հազիւ թէ գնվի մէկ ուրիշը, որ աւելի լաւ ճանաչի Բարկանան թերակղզին, մանաւանդ նրա արևմտեան մասը, քան թէ Իսուֆ-բէյ։ Մակեդոնիայի, Էպիրոսի, Թէսալիայի և Պրանիայի իւրաքանչիւր գիւղը նրան յայտնի է։ Նա կարող է մատնելով հաշուել թէ ինչպէս, ինչքան յայն, բոլգարացի և ալբանցի բնակիչ կայ։ Իր ճանապարհորդութիւնների, մարդկերանց ճանաչելու և բնական ազգային ընդունակութիւնների շնորհիւ Իսուֆ-բէյ բաւական զարգացած մարդ է։ Կրնով մանկամատակն, նա մեծ յարգանքով վերաբերվում է քրիստոնէութեանը։ Իսուֆ-բէյ իր գաղափարները քարոզում էր ֆանատիկոսի յամառութեամբ։ Նա թիւրքաց անկարգ վարչութեան անհաշտ թշնամի է և այդ պատճառով չափազանց շատ անգամ կալանաւորված է եղել։ Իսուֆ-բէյ մի քանի բրօշիւրներ է հրատարակել, որոնցով նա չափազանց պատիրում է թիւրքաց վարչութիւնը։ Այդ գրուածներից մէկի մէջ նա ասում է.

«Եթէ ինքը Թիսուս Քրիստոսը է 24000 մարգարէներ զային թիւրքիայի մէջ եւրոպային խոստացած վերանորոգութիւնները մոցնելու համար, այդ նրանց էլ չէր աջողվի, որովհետև նրանք հին ժամանակներում ընդդիմանում էին մի սատանայի և խաչվում էին, սպրվում, տանջվում և այլն, իսկ այժմ երբ բոլոր փաշաները, խօջաները, շէյխները, սօֆիաները և կայմակամները սատանաներ են, դրանց ընդդիմանալը աներևակայելի է։»

Բարկանան թերակղզու ժողովուրդների վիճակը նա ողբում է շարժում և գեղեցիկ ոճով Նկարագրելով ալբանացիներին և նրանց դրութիւնը, նա վշտանում է, որ բնութենից հարուստ այդ ժողովրդը ընկված է թիւրքաց վարչութիւնից։ Ուժով մահմեդականացրած, նրանք դիմամոր վարվեր և սկզբնական դրութեան մէջ են թողված։ Ալբանացիների իշխանները հալածվում և կոտորվում էին, նրանց հողերը յափշտակվում։ Թիւրքաց վարչական ընդունակ մարդիկ, որոնք տարարաղարար ալբանցիներ էին լինում, վաղ թէ ուշ կամ աքսորվում էին կամ սպանվում։ Ժողովրդը կամ վարում էր հողերը նահապետական ձևով, կամ արածեցնում էր իր հօտերը և իր վերջին կոպեկներով վճարում էր թիւրքաց զանազան անիծ և անարդար հարկերը, կամ աւազակութեամբ էր պարապում։ Դեռ աւազակութիւնը իր լաւ կողմերը ուներ, որովհետև ալբանցի ռահիները չէին մոռանում գենքի զորձածութիւնը։ Այդ գրութիւնը չափազանց ծանր էր և անտանելի դարձաւ, երբ արտաքին յարաբերութիւնների շնորհիւ ալբանացիները զգացին իրանց դրութիւնը։ 1876 թուականի Սերբիայի պատերազմից յետոյ յոյսը և կենսական ցանկութիւնները ակներև եղան և ամենքի հայեացքները ուղղվեցան Կ. Պոլսի կօնֆերենցիայի վրա։ Իսուֆ-բէյի կարծիքով այդ կօնֆերենցիայի նպատակը Թիւրքիայի վերքերի դարմանելը պէտք է լինէր, բայց եւրոպական պետութիւնների ներկայացուցիչների, մանաւանդ Անգլիայի ներկայացուցչի խաղաղ ցանկութիւնն այն էր, որ կրուպի թնդանօթների զոռոցը լռվեցաւ և ասիական և եւրոպական Թիւրքիայի անմատչելի ժայռերը և կանաչ դաշտերը արիւնով ներկվեցան։ Բերլինի կօնգրէսը Իսուֆ-բէյ անուանում է «հիւանդ մար (Կ. Պոլսի կօնֆերենցիա) հիւանդ ոտքի»։ Նրա կարծիքով Բերլինի կօնգրէսը պէտք է գաներ «այն թաշկինակը, որով կարելի լիներ սրբել Բարկանան թերակղզու տարարաղդ ժողովրդների արիւնոտ արտասուքները», իսկ դրա փոխարէն կօնգրէսը Պրպրոս կղզին գրեց Անգլիայի անյատակ գրպանը, Բոսնիան և Հերցեգովինան Աւստրիայի տուեց։ Խօսելով Բոսնիայի մասին Իսուֆ-բէյ ցաւում է, որ այդ երկիրը չորս տարի շարունակ իր ամենաաւաղ որդիների արիւնը թափեց և նրա այդ վիճանն վարմունքը նրանով վարձատրվեցաւ, որ ինքը ուրիշի սեփականութիւն դարձաւ։ Հեղինակը մխիթարվում է տեսնելով, որ թիւրքաց վարչութիւնը չը կարողացաւ խլել Ալբանիայից նրա պատմական քաջութիւնը և վիճանութիւնը։

«Այս, ասում է հեղինակը, ալբանցիները օգնութեան և համակրութեան արժանի են։ Բանաւորները չը կարողացան սոսկել այդ ժողովրդին փախչել իր հայրենիքից։ Նա չը մոռացաւ իր սուրբ բ ե ս ս ա ն (միմեանց օգնելու երդում), չը տուեց իր գենքը, չը դաղթեց, թալ չը տուեց, որ իրան բեռանկեր անասուն դարձնեն և պահպանեց իր ազգութիւնը, պահպանելով իր հայրենիքը և մայրենի լեզուն։ Զերնօզորցիները նման են ալբանցիներին, բայց նրանք պաշտպան էլ ունեն, ալբանցիները ոչ ոք չունեն։ Ալբանցիները պէտք է անեան լինեն, նրանց դաշնակից է հարկաւոր և ահա ալբանցի զինաւոր նայում է իր շուրջը. Սլաւեան հոկան շրջապատել է նրան իր հզոր բազուկներով, Թիւրքիան մեռնում է, Ցուհաստանի հիրոտական գարը անցել է և այժմ արժանի է ալբանցիների արհամարհական ժպիտին։ Բարկան նրան ձեռք է մեկնում, բայց նրա այժերը, համեմատելով պալկանների այժերի հետ, ոչինչ նշանակութիւն չունեն։ Ալբանան իր խոզերից աւելի շատ եկամուտ ունի, քան թէ Բարկան իր մանրաբոնեներից։ Աւարտիան ոսից մինչև գլուխ զինաւորված կանգնած է մեր սահմանների մոտ, բայց նրա զէնքի վրա չէ ցամաքել Բոսնիայի բնակիչների, նրանց կանանց և երեխաների արիւնը, այն քաջ հերոսների արիւնը, որոնց Վիշնիայի արքիսա կանայք չեն ծնել, այլ Բոսնիայի քաջ մայրերը, որոնք դեռ օրօրոցի մէջ սովորեցնում են իրանց երեխաներին սրբել հայրենիքը, պաշտպանել նրան և մեռնել նրա համար։ Միայն կոյրը կարող է չը նկա-